ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՂԹԱՆԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Այսօր մենք կդիտարկենք Հեսու 7-ը՝ Աքարի մեղքը, կկապակցենք այն Ծննդոց 3-ի՝ Ադամի և Եվայի անկման, և Գործք 5-ի՝ Անանիայի ու Սափիրայի խաբեության հետ: Եվ կտեսնենք թե՛ ծածուկ մեղքի վտանգը, և թե՛ խոստովանված մեղքի հույսը: Այս պատմությունը մեզ հիշեցնում է, որ մեղքը միշտ ունի հետևանքներ, բայց նաև կա հույս Քրիստոսով:

Հեսու գրքի 6-րդ գլխում Իսրայելը տեսավ իր պատմության ամենամեծ հաղթանակներից մեկը՝ Երիքովի անկումը: Սակայն ընդամենը մեկ գլուխ անց՝ Հեսու 7-ում, նրանք պարտվում են փոքրիկ Գայի քաղաքում:

*Ի՞նչ եղավ: **Մեկ մարդու ծածուկ մեղքը ողջ ազգին ծունկի բերեց:** Այսօր դիտելու ենք Աքարի կյանքը և կտեսնենք, թե ինչ է սովորեցնում մեզ մեղքի լրջության, սրբության և Քրիստոսով մեր ունեցած հույսի մասին:*

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀԵՍՈՒ 7

1 Բայց Իսրայելի որդիները հանցանք գործեցին նզովքի պատճառով, որովհետև...Աքարը առավ նզովված բաներից. և Տիրոջ բարկությունը բորբոքվեց Իսրայելի որդիների վրա:

4 Եվ ժողովրդից մոտ երեք հազար մարդ բարձրացավ այնտեղ, բայց փախան Գայիի մարդկանց առջևից: 5 ...Ժողովրդի սիրտը հալվեց ու ջուր դարձավ:

I. ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՋՈՐԴԵԼ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*10 Եվ Տերը Հեսուին ասաց. Վե՛ր կաց, ինչո՞ւ ես այդպես ընկել երեսիդ վրա: 11 **Իսրայելը մեղք գործեց**.*

Նկատեք՝ Աստված չասաց «Աքարը մեղանչեց», այլ ասաց՝ «Իսրայելն է մեղանչել»:

Կա հավաքական պատասխանատվություն: «Եվ եթե մի անդամը ցավում է, բոլոր անդամներն էլ նրա հետ ցավում են: (Ա Կորնթացիս 12:26):

*նրանք դրժեցին իմ ուխտը, որ ես պատվիրեցի նրանց: Նրանք վերցրել են նզովվածից, գողացել են, սուտ խոսել ու նաև դրել են իրենց **կարասիների մեջ**: 12 Ուստի Իսրայելի որդիները չեն կարող կանգնել իրենց թշնամիների առաջ. նրանք թիկունք կդարձնեն իրենց թշնամիների առաջ, որովհետև նզովք են դարձել. այլևս ձեր մեջ չեմ լինի, եթե դուք նզովվածը ձեր միջից չվերացնեք: 13 Վե՛ր կաց, սրբագործի՛ր ժողովրդին և ասա՛. Սրբագործվե՛ք վաղվա համար, որովհետև Իսրայելի Տեր Աստվածն այսպես է ասում. Ո՛վ Իսրայել, ձեր մեջ նզովք կա. դու չես կարող կանգնել քո թշնամիների առաջ, մինչև որ նզովքը չվերացնեք ձեր միջից:*

- ***Աստված բացահայտեց մեղքը՝ տոհմ առ տոհմ, մինչև որ Աքարը գտնվեց:***

II. ՄԵՂՔԸ ՊԵՏՔ Է ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ՈՉ ԹԵ ԹԱՔՑՆԵԼ

*20 Աքարը պատասխանեց Հեսուին՝ ասելով. «Հիրավի, ես մեղք գործեցի Իսրայելի Տեր Աստծու դեմ և այս բաներն արեցի. 21 ավարի մեջ **տեսա** Սենեարի մի **գեղեցիկ** վերարկու, երկու հարյուր սիկղ արծաթ և հիսուն սիկղ ծանրությամբ մի ձուլակտոր ոսկի. ցանկանալով՝ **վերցրի** դրանք. և ահա դրանք **թաքցված** են հողի տակ իմ վրանում, իսկ արծաթը դրա տակ է:*

- ***Աքարը վերջապես խոստովանեց. «Տեսա, ցանկացա, վերցրի, թաքցրի»:***

  Սա մարդկության պատմությունն է. աչքը գայթակղվում է, սիրտը ցանկություն է ծնում, կամքը վերցնում է, և հետո մարդը փորձում է թաքցնել մեղքը:

  *Եվան **տեսավ** պտուղը, **ցանկացավ**, **վերցրեց**, ապա ինքը և Ադամը **թաքնվեցին** (Ծն.3):*

  Եվ Տեր Աստծու ձայնը լսեցին, որ ման էր գալիս պարտեզում օրվա զով ժամին: Ադամն ու իր կինը թաքնվեցին Տեր Աստծու երեսից պարտեզի ծառերի մեջ (Ծննդոց 3.8):

  *Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. **«Ո՞ւր ես»**:*

  Ռաքելը գողացավ հոր կուռքերը և նստեց վրան...

- ***Նոր Կտակարանում Անանիան և Սափիրան նույն սխալը կրկնեցին՝ փորձելով թաքցնել իրենց ագահությունը... (Գործք Առաքելոց 5.1–11):***

  Ղուկաս 12.2 մեզ հիշեցնում է. «Որովհետև ծածուկ ոչինչ չկա, որ հայտնի չդառնա, և գաղտնի բան, որ չիմացվի»:

  Աստծո աչքից ոչինչ ծածուկ չէ (Եբր. 4.13):

Տերը Հեսուին ասաց. «Մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր. վերցրո՛ւ քեզ հետ բոլոր պատերազմող մարդկանց և վեր կաց բարձրացի՛ր դեպի Գայի: Ահա ես քո ձեռքն եմ մատնում Գայիի թագավորին, նրա ժողովրդին, նրա քաղաքը և նրա երկիրը (Հեսու 8.1):

III. ՔՐԻՍՏՈՍ Է ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

- ***եթե Ադամը, Եվան, Աքարը և մարդկությունը ընկան «Տեսա – Ցանկացա – Վերցրի – Թաքցրի» ճանապարհով, ապա Քրիստոս եկավ այդ նույն ճանապարհը հաղթահարելու համար:***

  Ինչպես մեկի անհնազանդությամբ շատերը դարձան մեղավորներ, այնպես էլ մեկի հնազանդությամբ շատերը արդար պիտի դառնան (Հռոմեացիս 5:19):

  Ուրեմն հիմա դատապարտություն չ'կա Հիսուս Քրիստոսում լինողների համար, որ մարմնավորապէս չեն վարվում, այլ հոգևորապէս: Որովհետեւ կեանքի հոգու օրէնքը Հիսուս Քրիստոսում՝ ազատեց ինձ մեղքի և մահի օրէնքից (Հռ. 8.1-2):

  Իսկ եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու մեզ և մաքրելու մեզ ամեն անիրավությունից (Ա Հովհաննես 1.9):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ